ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948 թ., № 2 Общественные науки

Հ. Էլչիբեկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1921 թ. ապրիլի 2-ին ջախջախվեց դաշնակցականների փետրվարյան ավանտյուրան։ Դաշնակների մի մասին հաջողվեց փախչել Զանգեզուր, որտեղ տխրահռչակ խմբապետ Նժդեհը փորձում էր հենվելով արտաքին ուժի վրա՝ Զանգեզուրը պլացդարմ դարձնել և շարունակել պայքարը Սովետական իշխանության դեմ։ Սակայն պարզ էր, որ Զանգեզուրում ևս նրանք երկար դիմադրել չէին կարող։ Շուտով սովետական զորամասերը մաքրեցին Զանգեզուրը դաշնակցականներից։ 1921 թ. հուլիսի 15-ին ռազմական գործողությունները Զանգեզուրում վերջացան, և ջարդված դաշնակցական բանդաների մնացորդները փախան Պարսկաստան։

1921 թ. ապրիլի վերջին թուրքական օկուպացիոն զորքերը թողին Ալեքսանդրապոլի գավառը, որը նրանք գրավել էին 1920 թ. դաշնակցական Հայաստանի և քեմալական Թուրքիայի միջև ծագած պատերազմի հետևանքով։ Չտեսնված ծանր օրեր ապրեց այդ գավառի բնակչությունը օկուպացիայի ամբողջ ժամանակաշրջանում։ Բնակչությունը բնաջնջվում էր, իսկ գույքը՝ թե մասնավոր և թե պետական՝ հափշտակվում։ Հայկական ՍՍՌ Պետական Կենտրոնական Արխիվում պահվող նյութերը ցույց են տալիս, որ թուրքերը Կարսի մարզում, Ալեքսանդրապոլի գավառում և այսպես կոչված «չեզոք գոտում», որը հասնում էր գրեթե մինչև Կիրովական, սպանել էին մոտ 30 հազար տղամարդ, 30 հազար կին և երեխա. բացի այդ, սովից մեռածների թիվը հասնում էր 32 հազարի։[1] Այդ վայրերից թուրքերը աշխատանքի էին քշել Էրզրումի ուղղությամբ մոտ 15 հազար մարդ, որոնց մեծ մասը չվերադարձավ տուն։ Պետական ու մասնավոր գույքի հափշտակումը չտեսնված չափերի էր հասել և կրում էր սիստեմատիկ բնույթ։ Տանում էին ամեն ինչ՝ սկսած պատուհանների, դռների շրջանակներից, մինչև շոգեքարշերը, վագոնները, գյուղատնտեսական գործիքները։ Ալեքսանդրապոլում ցերեկով օկուպանտների սայլը կանգնում էր այս կամ այն տան առջև։ Թուրք զինվորները մտնում էին ներս և հանում իրենց ցանկացած իրերը։ Ոչ լրիվ տվյալներով, Կարսի մարզի և գավառի գյուղերից տարել էին մոտ 32 հազար խոշոր և 28 հազար մանր եղջյուրավոր անասուն, 850 հազար փութ հացահատիկ և այլն։ Այս բոլորը դեռ քիչ էր թվում օկուպանտներին։ Գավառը թողնելուց առաջ թուրքական հրամանատարությունը իր պարտքը համարեց լկտիաբար սպառնալ հայերին նոր արշավով։ Թուրքական հրամանատարության ներկայացուցիչ Քյազիմ-բեյը քաղաքի ներկայացուցիչների հետ վերջին անգամ հանդիպման ժամանակ հայտարարեց.

«Մենք գնում ենք, կարմիրները գալիս են... Եթե մենք մի անգամ

---

1 Հայկական ՍՍՌ Պետական Կենտր. Արխիվ, ֆոնդ № 4/116, գործ № [illegible], թերթ 1։

էլ գանք՝ քարը քարի վրա չենք թողնելու Ալեքսանդրապոլում, երեխաներն անգամ չեն խնայվի, բոլորին կկոտրենք։ Այն, ինչ արինք այս անգամ՝ դեռ բախտավորություն էր. զգուշացիր մեր հրրորդ անգամ այստեղ գալուց։[1]

Դաշնակցականների հանցավոր քաղաքականության պատճառով ծագած քաղաքացիական պատերազմը նոր հարված հասցրեց Հայաստանի առանց այն էլ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և, մանավանդ, դաշնակցականների տիրապետության օրոք քայքայված տնտեսությանը։ Արարատյան դաշտի գյուղերը, Դարալագյազը, Զանգեզուրը, Իջևանը, Ալեքսանդրոպոլի և Ղարաքիլիսայի գավառները սովի ծանր օրեր էին ապրում։ Քաղաքացիական պատերազմի պատճառով գարնանացանը ուշացել էր։ Գյուղացիության ճնշող մեծամասնությունը չուներ սերմացու և լծկան։ Սովետական իշխանության հաստատումից հետո իրենց ավերված գյուղերը վերադարձան մոտ 100 հազար ադրբեջանցի գյուղացիներ[2], որոնք նույնպես ոչինչ չունեին և որոնց անհրաժեշտ էր օգնել և սերմացուով և լծկաններով։ Չնայած Սովետական իշխանության առջև ծառացած այս հսկայական դժվարություններին, անհրաժեշտ էր օգտագործել գարնան մոտացած վերջին օրերը և վարել ու ցանել ինչքան որ հնարավոր էր։ Ապրիլի 3-ին, այսինքն՝ Սովետական կառավարության՝ քաղաքացիական կռվից հետո Երևան մտնելու օրը, կառավարության կողմից տրվեց հրաման, որով առաջարկվում էր սովետական բոլոր օրգաններին անմիջապես վերսկսել քաղաքացիական պատերազմի պատճառով ընդհատված իրենց աշխատանքները։ Այդ հրամանի հ-րդ կետում ասվում էր.

«Պարժողկոմի վրա պարտականություն է դրվում Հանրապետության պարենային միջոցների հայտնաբերման հետ միասին անմիջապես ամենահառանդուն կերպով ձեռնարկել սերմացուների պատրաստման և բաշխման»։

Գյուղացիության հնարավորության սահմաններում բաշխվեց սերմացու — 71 հազար փութ ցորեն և 15 հազար փութ կորեկ։ Չնչին էր այս քանակությունը, բայց ուրիշ ելք չկար — ժամանակը չէր սպասում։

Սակայն երկիրը հանել տնտեսապես միանգամայն քայքայված դրությունից, ազատել ժողովրդին սովից, հնարավոր չէր առանց Սովետական Ռուսաստանի օգնության։ Ռուս մեծ ժողովուրդը սկսել էր օգնություն ցույց տալ հայ ժողովրդին՝ Սովետական իշխանությունը Հայաստանում հաստատվելուց հենց առաջին օրերից հետո, բայց Վրաստանի մենշևիկյան կառավարությունը իմպերիալիստական պետությունների հետ միասին, ցանկանալով խեղդել Սովետական իշխանությունը Հայաստանում՝ չէր թույլատրում իր տերիտորիայով անցնող երկաթուղով Հայաստան փոխադրել Սովետական Ռուսաստանից և Ադրբեջանից ուղարկվող պարենը և վառելանյութը։ Հետո վրա հասավ քաղաքացիական պատերազմը, որի վերջանալուց և Վրաստանում Սովետական իշխանության հաստատումից հետո այդ արգելակը վերացավ։ Ապրիլի 6-ին Հայաստանի Ռևկոմը հեռագրով դիմեց ընկեր Ս. Օրջոնիկիձեին և օգնություն խնդրեց։

---

[1] Հայկական ՍՍՌ Գեղարքունիքի Կենտրոնական Արխիվ, ֆոնդ № 12/114, գործ № 172, թերթ 7։

[2] Հայաստանի Սոց. Խորհրդ. Հանրապ. Ժողովրդ. Կոմիսարիատների 1920—1922 թթ. հաշվետվություն, Երևան, 1923 թ. էջ 26

[3] «Կոմունիստ», № 61, 9 ապրիլի 1921 թ.։

«Երևանից հեռանալով, ասվում էր հեռագրում,— գաղնակները իրենց հետ տարել են պետական արժեքները ու բոլոր դրամանիշները՝ թե խորհրդային և թե հայկական։ Խնդրում ենք հեռնիրդ բերել առնվազն մեկ միլիարդ խորհրդային դրամանիշներ։ Պարսկաստանում պարեն պատրաստելու մեզ ու ավերված Նախիջևանի համար անհրաժեշտ է վալյուտա ունենալ։ Թախանձանքով խնդրում ենք այդպիսին բերել հեռնիրդ»[1]

Չնայած այն հանգամանքին, որ Սովետական Ռուսաստանը ինքը ևս գտնվում էր տնտեսական դժվարին վիճակում, բայց և այնպես օգնեց Հայաստանի աշխատավորներին մեկ ե կես միլիոն ռուբլի ոսկով, պարենով, մեկ միլիոն 350 հազար արշին մանուֆակտուրայով, որի կարիքը Հայաստանում շատ մեծ էր, կարելի է ասել՝ պարենից պակաս չէր ինչպես և օգնեց սերմացուով, դյուղատնտեսական գործիքներով—գութաններով, գերանդիներով, սեպարատորներով և այլն։

1921 թ. աշնանը և 1922 թ. գարնանը, պարտիական և սովետական կազմակերպությունները եռուն աշխատանք ծավալեցին ցանքերի տարածությունը լայնացնելու համար։ Գավառներում, շրջաններում և գյուղերում կազմակերպվել էին հատուկ կոմիտեներ, որոնք իրենց հսկողության տակ էին առել աշնանացանի և գարնանացանի աշխատանքները։ Սովետական իշխանությունը լուծեց սերմացուի և լծկանների խնդիրը։ 1921 թ. աշնանը և 1922 թ. գարնանը բաժանվեց 32 հազար փութ սերմացու, որից Սովետական Ռուսաստանից ստացվել էր 100 հազար փութ, արտասահմանում Սովետական Ռուսաստանից ստացված վալյուտայով գնվել էր 135 հազար փութ, իսկ մնացած մասը հավաքվել էր տեղում։[2] Սերմի մեծ մասը բաշխվեց գյուղացիությանը 1922 թ գարնանը։ Պարսկաստանում գնվեցին նաև լծկան անասուններ և ձրիաբար բաժանվեցին դրանց կարիքն ունեցող գյուղացիներին։

Գյուղացիությունը չտեսնված եռանդով լծվել էր աշխատանքի։ Կազմակերվում էին վարի շարաթներ։ Միևնույն գյուղի և հարևան գյուղերի, հաճախ և հարևան շրջանի գյուղացիները գալիս էին իրար օգնության և մեկը մյուսի պակասը լրացնելով՝ վարում էին ու ցանում։ 1922 թ. բերքը և Սովետական Ռուսաստանից ստացվող ցորենը ոչ միայն վերջ տվին սովին, այլև հնարավորություն ստեղծեցին դաշնակցականների օրոք իսպառ քայքայված հասած գյուղատնտեսության այնպիսի կարևոր ճյուղերի վերականգնման, ինչպիսիք են բամբակագործությունը, այգեգործությունը և ծխախոտագործությունը։ 1922 թ. Սովետական իշխանությունը բամբակագործությամբ զբաղվել ցանկացող գյուղացիների համար ստեղծեց մի շարք բարենպաստ պայմաններ և այդ թվին Սովետական Հայաստանում ցանվեց առաջին 700 դեսյատին բամբակը։

Սովետական իշխանությունը Հայաստանում հաստատվելուց հետո Հայաստանի բոլոր, կյանքը անմիջապես ձեռնամուխ եղան քայքայված երկրի նոր սոցիալական տնտեսական և քաղաքական կյանքի ստեղծման դժվարին աշխատանքին։ 1920 թ. դեկտեմբերին և 1921 թ. հունվարին

[1] Հայկական ՍՍՌ Գեսական կենտրոնական Արխիվ ֆոնդ № 17/150, գործ № 12, թ. 18։

[2] Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական Կոմիսարիատների 1920—1922 թ. թ. հաշվետվությունը ... էջ 28—30։

հրապարակվեցին մի շարք դեկրետներ, որոնք վարչական, տնտեսական, իրավական, կուլտուրական և աշխատանքի այլ բնագավառների ղեկավարման համար նոր մարմիններ էին կյանքի կոչում։ Ամենից առաջ անհրաժեշտ էր կազմակերպել իշխանությունը տեղերում՝ գավառներում, շրջաններում և գյուղերում։ Այդ աշխատանքը դրվում է Հայաստանի Ռևկոմի 1920 թ. դեկտեմբերի 2-ի դեկրետով ստեղծված Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի վրա։ Դեկտեմբերի 6-ի դեկրետով հիմնվում է կոնտրռևոլուցիայի, չարաշահության և պաշտոնյաների հանցագործության դեմ պայքարող Արտակարգ Հանձնաժողով։ Դեկտեմբերի 6-ին հրապարակված դեկրետով Սովետական Հայաստանի սահմաններում պետական լեզու հայտարարվում է հայոց լեզուն, իսկ այն վայրերում, որտեղ ապրում էին աղրբեջանցիք, հայերենին կից՝ նաև աղրբեջանականը։ Դեկտեմբերի 6-ին հրապարակված մի ուրիշ դեկրետով կյանքի է կոչվում Պարենավորման Ժողովրդական Կոմիսարիատը։ Դեկտեմբերի 15-ի դեկրետով հիմնվում է Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատը, իսկ նույն ամսի 21-ի դեկրետով վերացվում են ցարական և դաշնակցական կառավարությունների բոլոր օրենքներն ու նրանց փոխարեն Սովետական Հայաստանի սահմաններում մտցվում են Ռուսաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի օրենքները։ Դեկտեմբերի 28-ին հրապարակված դեկրետով պետականացվում է հողը։ Նույն ամսին կազմակերպվում է աշխատանքի Ժողովրդական կոմիսարիատը։ Այնուհետև դեկտեմբերին և 1921 թ. հունվարին հրապարակված դեկրետներով պետականացվում են բանկը և մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ։

Ինչպես ասացինք, տեղերում իշխանության կազմակերպման խնդիրը դրվում էր Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի վրա։ Իրականացնելով Հայաստանի Ռևոլուցիոն Կոմիտեի 1920 թ. նոյեմբերի 29-ի գեկլարացիան, Ներգործժողկոմատը իր 1920 թ. դեկտեմբերի 13-ի հրամանով վերացնում է դաշնակցական կառավարության ժամանակ գործող նահանգապետությունները, քաղաքային ինքնավարությունները, գավառական կոմիսարների և դաշնակցական կառավարության ներքին գործերի նախարարության արտակարգ լիազորների ինստիտուտները, միլիցիայի տեսուչները, նահանգական ատյանները։

Ամբողջ Սովետական Հայաստանի տերիտորիան բաժանվում է ութ գավառի՝ Երևանի (առանց քաղաքի), Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Կարաքիլիսայի, Լոռու, Իջևանի, Նոր-Բայազետի և Դարալագյազի, որոնց մեջ մտնում էին 33 գավառամասեր (շրջաններ)։ Սկսած գյուղից մինչև գավառ իշխանությունը իրենց ձեռքն են վերցնում, մինչև Սովետների ընտրությունները, նշանակովի ռևկոմները։ Գավառային ռևկոմները կազմակերպում էին շրջանային ռևկոմներ, իսկ վերջիններս՝ գյուղական ռևկոմներ։ Բոլոր ռևկոմների ղեկավարությունը վարչական կարգով դրված էր Ներքգործժողկոմատի վրա։ Նա իրավունք ունի Հայաստանի Ռևկոմի համաձայնությամբ հեռացնել և նշանակել տեղական ռևկոմների բոլոր անդամներին՝ մինչև Սովետների ընտրությունները։

Քաղաքացիական պատերազմը վերջանալուց և երկիրը խաղաղ աշխատանքի անցնելուց հետո ռևկոմներն իրենց ֆունկցիաները պիտի հանձ-

ներին Սովետներին, որոնք պիտի ընտրվեին։ Թե Հայաստանի Ռեկոմը և թե տեղական ռևկոմները ժամանակավոր վարչական մարմիններ էին, որոնք նոր՝ սովետական կարգերը ամրապնդելու հետ միասին նախապատրաստում էին պայմաններ՝ հրավիրելու Սովետների համագումարը։ 1921 թ. մայիսին Հայաստանի Ռևկոմը դարձավ Ժողովրդական Կոմիսարների Սովետ։

Նույն թվի վերջերին տեղի ունեցան գյուղական, շրջանային և գավառային Սովետների ընտրությունները, իսկ 1922 թվի հունվարի 30 ին Երևանի Պետական Թատրոնի (այժմ Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոն) սրահում բացվեց Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Բանվորների, Գյուղացիների և Կարմիր-բանակայինների Սովետների առաջին համագումարը։ Սովետների ընտրությունները կայացան աշխատավորների ակտիվ մասնակցությամբ և քաղաքական բարձր գիտակցությամբ։ Ընտրություններն անցան քայքայված երկրի արագ վերականգնման նշանաբանի տակ և մի անգամ ևս ապացուցեցին, որ Հայաստանի աշխատավորությունը և աշխատավորական ինտելիգենցիան միայն Սովետական իշխանության մեջ էին տեսնում երկրի փրկությունը և նրա ծաղկումը. ընտրությունները ցույց տվին նրանց անսահման սերը և լիակատար վստահությունը դեպի այդ իշխանությունը։

Համագումարին մասնակցում էին 252 պատգամավորներ, որոնցից 239 վճռական ձայնով, իսկ 13 ը՝ խորհրդակցական։ Ըստ սոցիալական դրության 154-ը գյուղացիներ էին, 40-ը բանվորներ, 24-ը աշխատավոր ինտելիգենցիայի ներկայացուցիչներ և 34-ը կարմիր-բանակայիններ։ Վերջիններս գյուղացիներ էին և նրանց թիվը պիտի ավելացնել գյուղացի պատգամավորների թվին, որով համագումարի գյուղացի պատգամավորների թիվը դառնում է 188 հոգի։ Այդ թվերը ճիշտ էին արտացոլում Սովետական Հայաստանի այն ժամանակվա սոցիալ-դասակարգային պատկերը։ Ըստ ազգության պատգամավորներից 21-ը հայ էին, 14-ը ադրբեջանցի, 21-ը ռուս, 1-ը հույն, 1-ը լեհ, 2-ը եզիդի և 1-ը ասորի։ Ըստ սեռի՝ տղամարդ 235 և կին 17։

Համագումարը քննեց հետևյալ հարցերը. 1. Ժողովրդական Կոմիսարների Սովետի զեկուցումը. 2. Սովետական Հայաստանի Կոնստիտուցիան. 3. Անդրկովկասյան Սովետական Ռեսպուբլիկաների Ֆեդերացիայի ստեղծման հարցը. 4. Նոր տնտեսական քաղաքականության կիրառումը Հայաստանում. 5. Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի հաշվետվությունը. 6. Զեկուցում կոոպերացիայի մասին. 7. Պարենավորման Կոմիսարիատի հաշվետվությունը. 8. Հասարակական (սոցիալական) ապահովությունը Հայաստանում. 9. Զեկուցում Կարմիր Բանակի մասին. 10. Կենտրոնական Գործադիր Կոմիտեի ընտրությունը։

Համագումարում քննության դրված հարցերը պատահական չէին։ Երկիրը մտել էր խաղաղ շինարարական աշխատանքի շրջանը. Սովետները փոխարինել էին ռևկոմներին և համագումարը պիտի մշակեր Սովետական Հայաստանի Կոնստիտուցիան (Հիմնական Օրենքը)։ այնուհետև նա իր խոսքը պիտի ասեր Անդրկովկասյան Սովետական Ռեսպուբլիկաների Ֆեդերացիայի մասին.- որը առաջ էր քաշվել ներքևից՝ Անդրկովկասի աշխատավորների կողմից։ Դաշնակցականների փետրվարյան ավանտյուրայի լիկվիդացիան դուգադիպեց Սովետական Ռուսաստանում նոր տնտեսական քա-

ղաքականության կիրառման առաջին քայլերին և միանգամայն հասկանալի է, որ համագումարը ցանկացավ իմանալ, թե ինչ է արվել և արվում այդ քաղաքականության կիրառման համար Հայաստանում։ Հրատապ էին և գյուղատնտեսության, պարենավորման, կոոպերացիայի, սոցիալական ապահովության խնդիրները, որոնցով զբաղվեց համագումարը։ Համագումարը զբաղվեց և Կարմիր Բանակի մարտունակության ավելի բարձրացման և ամրապնդման խնդրով։

Ժողովրդական Կոմիսարների Սովետի հաշվետու զեկուցումով հանդես եկավ նրա նախագահ Ա. Մյասնիկյանը, որը կանգ առավ Սովետական Հայաստանի արտաքին դրության վրա և այն ներքին անհետաձգելի խնդիրների վրա, որոնք կանգնած էին կառավարության առջև։ Խոսելով դաշնակցական կառավարության կախման մասին իմպերիալիստական պետություններից, սպանիչ քննադատության ենթարկելով այդ քաղաքականությունը, որը շատ թանգ նստեց հայ ժողովրդին և նրան վերջնական կործանման դռան առջև կանգնեցրեց, զեկուցողը իրավացիորեն դաշնակցության և հայ իրականությունում գործող մյուս բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հասցեին շպրտեց հետևյալ խոսքերը.

«Դուք կախված էիք Անտանտայից, շրջապատված էիք ամեն կողմից . . . իսկ մենք խզեցինք այդ բոլոր կապերը, փրկեցինք այս երկրի գլխին կախված դամոկլյան սուրը և տվինք նրան իսկական անկախություն»[1]։

Խոսելով այն խնդիրների մասին, որոնք կախված էին երկրի տնտեսական վերականգնման հետ, զեկուցողը շեշտում է նոր տնտեսական քաղաքականության կիրառման անհրաժեշտությունը։

«. . . Եթե այսօր Ռուսաստանի քաղաքականությունը համարվում է նոր,— հայտարարեց Ա. Մյասնիկյանը,— այդ քաղաքականությունը Հայաստանի համար ամենասկզբից պետք է լիներ»[2]։

Զեկուցողը խոսելով առանձին Ժողովրդական Կոմիսարիատների աշխատանքների մասին, առաջին հաջողությունների և գոյություն ունեցող թերությունների մասին՝ վերջում համագումարի ուշադրությունն է հրավիրում այն բացառիկ դժվարությունների վրա, որոնք կանգնած էին Սովետական իշխանության առջև Հայաստանում, և որոնք հետևանք էին դաշնակցականների վարած հակաժողովրդական քաղաքականության և որոնց հաղթահարման համար անհրաժեշտ էր անդուլ աշխատանք։ Նա [illegible] ստեղծագործ աշխատանքի էր հրավիրում երկրի բոլոր կարող ուժերին, բոլոր նրանց, ում համար թանկ են Սովետական Հայաստանի շահերը։ Իր զեկուցման վերջում Ա. Մյասնիկյանը համոզմունք է հայտնում, որ այդ դժվարությունները կհաղթահարվեն, Սովետական Հայաստանին օգնության կգան բոլոր սովետական ռեսպուբլիկաները Սովետական Ռուսաստանի գլխավորությամբ։

Համագումարը առանց վիճաբանությունների և միաձայն հավանություն է տալիս Ժողովրդական Կոմիսարների Սովետի գործունեությանը։

Սովետական Հայաստանի Կոնստիտուցիայի նախագծի մասին զեկու-

[1] Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Բանվորների, Գյուղացիների և Կարմիր-բանակայինների Պատգամավորական Խորհուրդի առաջին համագումարի արձանագրությունը, Երևան, 1922 թ., էջ 20։

[2] Նույն տեղում, էջ 18։

ցում է Ա. Մռավյանը։ Նա հանդիսավորեն կանգ է առնում այն սկզբունքային տարբերության վրա, որ կա բուրժուական և սովետական երկրների կոնստիտուցիաների միջև, և ապացուցում է, որ Սովետական Կոնստիտուցիան ամենադեմոկրատականն է աշխարհում։ Այնուհետև զեկուցողը ընթերցում է նախագիծը, որը համագումարը հոդված առ հոդված քննում է, ուղղումներ է մտցնում և ընդունում է Սովետական Հայաստանի առաջին Կոնստիտուցիան։ Այդ առթիվ համագումարի կողմից ընդունած բանաձևում ասվում էր.

«Հայաստանի Բանվորների, Գյուղացիների և Կարմիր-Զինվորների Պատգամավորների Խորհուրդների առաջին համագումարը ընդունում է սույն Սահմանադրությունը (Հիմնական օրենքը)։

Այս հիմնական օրենքը իրագործվում է այն րոպեից, երբ նա կհրատարակվի վերջնական ձևով «Խորհրդային Հայաստանում»։ Սա պետք է հրատարակվի խորհրդային իշխանության բոլոր տեղական թերթերում և պետք է կախվի բոլոր պետական հիմնարկություններում, աչքի ընկնող տեղում։

Հայաստանի Խորհուրդների առաջին համագումարը հանձնարարում է Ժողովրդական Լուսավորության Կոմիսարիատին, որ Հայաստանի բոլոր դպրոցական հիմնարկություններում, առանց բացառության, ուսուցվի սույն Սահմանադրության հիմնական կետերը, տյուն բացատրվի ու մեկնաբանվի»։[1]

Կոնստիտուցիան բաղկացած էր հինգ հատվածից, տասներկու գլխից և 89 հոդվածից։ Առաջին հատվածում, որը կազմված էր մի գլխից—առաջին գլխից խոսվում էր իշխանության հիմնական սկզբունքների մասին. երկրորդ հատվածում, որը կազմված էր երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ գլուխներից, խոսվում էր Սովետական իշխանության կառուցվածքի մասին—Սովետների համագումարի, Կենտրոնական Գործադիր Կոմիտեի, Ժողովրդական Կոմիսարների Սովետի, տեղական իշխանությունների ընտրությունների, նրանց ֆունկցիաների և իրավասության ու Սովետների և Սովետների համագումարի պատգամավորների և գործադիր կոմիտեների անդամների պաշտոնությունների մասին. երրորդ հատվածում որը կազմված էր ութերորդ, իններորդ և տասներորդ գլուխներից, խոսվում էր ընտրական իրավունքների, ընտրությունների կատարման և ընտրությունների ստուգման, քննման և պատգամավորներին ետկանչման մասին, չորրորդ հատվածում, որը կազմված էր ե տասնհինգերորդ գլուխներից, խոսվում էր բյուջեի իրավունքի մասին և հինգերորդ հատվածում, որը կազմված էր տասներկուերորդ գլխից, սահմանվում և նկարագրվում էին Սովետական Հայաստանի պետական գիրքը և դրոշը։ Պետական դերբն էր Մեծ ու Փոքր Մասիսները, որոնց վերևում, ծագող արեգակի ճառագայթների մեջ գետեղված էին մուրճ ե մանգաղ, իսկ ներքևում՝ խաղողի թուփ ողկույզներով։ Աջից և ձախից ցորենի հասկեր և ալկի բարձր՝ ձիթենու ճյուղեր։ Գերբի կրկնակի շրջագծերի արանքում արձանագրված էին «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն» և «Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք»։ Պետական դրոշն էր կարմիր գույնի կտոր,

[1] Նույն տեղում, էջ 107։

որի ձախ անկյունի վերևի մասում, փայտի մոտ, գետեղված էին Հ. Ս. Խ. Հ. տառերը կամ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն բառերը։

Ընկեր Ստալինը Սովետների Համամիութենական 8-րդ Արտակարգ Համագումարում ՍՍՌ Միության Կոնստիտուցիայի նախագծի մասին տված իր զեկուցման մեջ խոսելով այն տարբերության մասին, որ կա Կոնստիտուցիայի և ծրագրի միջև, ասում է.

«... Կոնստիտուցիոն Հանձնաժողովը, նոր Կոնստիտուցիայի նախագիծը կազմելիս, ելակետ է ունեցել այն, որ Կոնստիտուցիոն չպետք է շփոթել ծրագրի հետ։ Այդ նշանակում է, որ ծրագրի և Կոնստիտուցիայի միջև էական տարբերություն կա։ Մինչդեռ ծրագիրը խոսում է այն բանի մասին, ինչ որ դեռ չկա և ինչ որ գիտ պետք է ձեռք բերվի ու նվաճվի ապագայում, Կոնստիտուցիան, ընդհակառակ, պետք է խոսի այն բանի մասին, ինչ որ արդեն կա, ինչ արդեն ձեռք է բերված ու նվաճված է այժմ, ներկայումս։»[1]

Սովետական Հայաստանի առաջին Կոնստիտուցիան արձանագրում էր մի նվաճում։ Դա՝ Սովետական իշխանության հաստատումն էր Հայաստանում և որոշում էր այդ իշխանության մարմինների կազմակերպման սկզբունքը, ֆունկցիաները և իրավասությունը։ Հետագայում, Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպման կապակցությամբ, Կոնստիտուցիայի մեջ մտան փոփոխություններ և լրացումներ, հիմնովին վերամշակվեց նրա առաջին գլուխը։ Եվ հասկանալի է դա։ Ձեռք բերված նվաճումները պիտի մտնեին Կոնստիտուցիայի մեջ։

Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների ֆեդերացիայի մասին համագումարում զեկուցումով հանդես եկավ նույնպես Ա. Մռավյանը։

Այդ ռեսպուբլիկաների ֆեդերացիան անհրաժեշտ էտապ էր նրանց պատմության զարգացման մեջ։ Այդ էր պահանջում Անդրկովկասում Սովետական իշխանության, ինչպես և նրա ժողովուրդների եղբայրական կապի ամրապնդումը, քայքայված տնտեսության արագ վերականգնման, սոցիալիստական շինարարության հաղթանակը, արտաքին ուժի առջև միասնական ճակատով հանդես գալու անհրաժեշտությունը։

Անդրկովկասյան Ֆեդերացիան պիտի եղբայրական կապերով միացներ իրար հետ Անդրկովկասի ազգություններին, որոնց իրարից բաժանել և իրար դեմ էին հանել մենշևիկները, դաշնակցականները և մուսավաթականները իրենց տիրապետության օրոք։ Անհրաժեշտ էր, որ ժողովուրդներ արյունոտ անցյալը։ Ընկեր Ստալինը՝ Ռ Կ (բ)Պ XII համագումարում՝ պարտիական և պետական շինարարության ազգային մոմենտների մասին տված իր զեկուցման մեջ խոսելով մինչև Սովետական իշխանության հաստատումը Անդրկովկասում տիրող ազգամիջյան թունոտ մթնոլորտի և Անդրկովկասյան Սովետական Ռեսպուբլիկաների ֆեդերացիայի դերի մասին, հայտարարեց. «Եվ ահա փոխադարձ անվստահության այդ իրադրությունում, եթե Սովետական իշխանությունը չկարողանար Անդրկովկասում ստեղծել ազգային խաղաղության օրգան, որը կկարողանար կարգավորել տարաձայնությունները և կոնֆլիկտները՝ մենք կվերադառնայինք ցարիզմի

[1] Ի. Վ. Ստալին - ՍՍՌ Միության Կոնստիտուցիայի նախագծի մասին, Երևան, 1948 թ., էջ 19։

էպոխային, կամ դաշնակների, մուսավաթիստների, մենշևիկների էպոխային. երբ մարդիկ այրում և մորթոտում էին իրար»։[1]

1921 թ. նոյեմբերի 22-ին Թբիլիսիի կոմունիստական պարտիայի համաքաղաքային նիստում Անդրկովկասյան ֆեդերացիայի մասին տված իր զեկուցման մեջ ընկեր Օրջոնիկիձեն, խոսելով ֆեդերացիայի անհրաժեշտության մասին, հայտարարեց.

«Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների միջև տնտեսական և քաղաքական ֆեդերացման անհրաժեշտությունը այնպես ուժեղ էր, որ դեռ մինչև ֆեդերացիայի ձևի նախասահմանումն ինքնին կյանքի կողմից թելադրվում էր ռեսպուբլիկաների անտեսական կյանքի մի շարք ճյուղերի անմիջական միացման անհրաժեշտությունը, ինչպես, օրինակ, երկաթուղիների, արտաքին առևտրի, մաքսային քաղաքականության։ Իսկ մթթե մեր ֆինանսական վակխանալիան չի պահանջում այդ հարցի միատեղ կանոնավորումն։ Իսկ մթթե ճահիճների չորացումը և ոռոգումը չի պահանջում բոլոր ռեսպուբլիկաների համատեղ աշխատանքը։ Մթթե Անդրկովկասի բոլոր ռեսպուբլիկաների անտեսական կյանքը չի պահանջում միասնական պլան»։[2]

Խոսելով Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծման անհրաժեշտության մասին, ընկեր Բերիան իր «ՍՍՌՄ-ի նոր կոնստիտուցիան և Անդրկովկասյան Ֆեդերացիան» հոդվածում գրում է.

«Ի՞նչպիսի պայմաններում է ստեղծվել Անդրկովկասյան Ֆեդերացիան։

ա) Աշխատավոր մասսաների և Կարմիր Բանակի միացյալ ջանքերով 1920—1921 թվականներին Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում հաստատվեց սովետական իշխանություն։

բ) Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաները ժառանգություն ստացան մենշևիկների, մուսավաթականների և դաշնակների տիրապետության կողմից խպառ ավերված հետամնաց տնտեսություն։

գ) Մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների կողմից իմպերիալիստական ինտերվենտների ուղղակի դիրեկտիվով Անդրկովկասի ժողովուրդների միջև կազմակերպված արյունալի ընդհարումների հետևանքները դեռ վերացված չէին։

դ) Մենշևիկները, մուսավաթականները և դաշնակները ակտիվ պայքար էին մղում սովետական իշխանության դեմ, հրահրելով ազգային երկպառակությունը։

Անդրկովկասի ռեսպուբլիկաների այդպիսի գրությունը սովետական իշխանության ստեղծման և ամրապնդման սկզբնական շրջանում հրամայողաբար պահանջում էր Անդրկովկասի ռեսպուբլիկաների համատեղ ջանքերը՝ տնտեսական փլուզումը վերացնելու և անտեսությունը բարձրացնելու համար, հատուկ մարմին ստեղծելու համար, «որը կարողանար կարգավորել փոխհարաբերություններն ազգությունների միջև» (Ստալին), Անդրկովկասի ռեսպուբլիկաների համատեղ ջանքերը՝ մենշևիկների, դաշնակների ու մուսավաթականների հակառևոլուցիոն պարտիաները վերջնականապես ջախջախելու համար»։[3]

---

[1] *И. В. Сталин*—Сочинения, том 5. Москва, 1947 г., стр. 251—252.

[2] *Г. К. Орджоникидзе*—Избранные статьи и речи, 1945 г., стр. 64.

[3] *Л. П. Берия*—Новая Конституция СССР и Закавказская Федерация. «Правда», № 160 от 12 июня 1936 г.

Կար մի ուրիշ հանգամանք ևս, որը նույնպես պահանջում էր Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծումը։ Դա արտաքին ուժն էր, որի առջև անդրկովկասյան ռեսպուբլիկաները պիտի հանդես գային սերտորեն միացյալ ճակատով։ 1922 թ. հունվարի 30-ին հանդես գալով ազգային հարցի շուրջը Վրաստանի կոմունիստական պարտիայի առաջին համագումարում, ընկեր Օրջոնիկիձեն, խոսելով իր ելույթում ընդհանրապես սովետական ռեսպուբլիկաների սերտորեն միացման անհրաժեշտության մասին իմպերիալիստական պետությունների հանդեպ, շեշտեց դրա անհրաժեշտությունը Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների համար։

«Այդ հատկապես անհրաժեշտ է շեշտել,— հայտարարեց նա,— Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ։ Անտանտան ցանկանում էր նրանցից Բալկաններ ստեղծել, իսկ մենք կստեղծենք շահերի միասնականությամբ շաղկապված աշխատավոր ժողովուրդների եղբայրական ընտանիք»։[1]

Որպես իլյուստրացիա նման համերաշխ քայլի, ընկեր Օրջոնիկիձեն Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության կազմակերպման մասին 1922 թ. դեկտեմբերի 11-ին Անդրկովկասյան Սովետների առաջին համագումարում տված իր զեկուցման մեջ բերեց Կարսի կոնֆերանսի օրինակը։ 1921 թ. հոկտեմբերին անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների և Թյուրքիայի միջև պայմանագիր կնքվեց, որը լուծում էր մի շարք հարցեր երկու կողմերի միջև։ Թյուրքիան պահանջում էր, որ պայմանագիրը կնքվի ամեն մի ռեսպուբլիկայի հետ առանձին-առանձին, սակայն անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաները չհամաձայնվեցին այդ առաջարկի հետ և պնդեցին, որ կնքվի մի պայմանագիր բոլոր ռեսպուբլիկաների հետ։

«...Թյուրքերը ցանկանում էին,— ասաց ընկեր Օրջոնիկիձեն,—կնքել առանձին պայմանագրեր Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի հետ։ Թյուրքիայի հետ միասնական պայմանագրի կնքումն մի ավելորդ անդամ ապացուցում է, որ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը հանդես են գալիս որպես մի ամբողջություն, որպես մի եղբայրական ռեսպուբլիկա»։[2]

1921 թ. նոյեմբերի 29-ին Ռուսաստանի Կոմ (ր) Պ Կենտկոմը Լենինի և Ստալինի միատեղ առաջարկի հիման վրա որոշում է Անդրկովկասյան Սովետական Ռեսպուբլիկաների Ֆեդերացիայի ստեղծումը համարել սկզբունքորեն բացարձակապես ճիշտ, անհրաժեշտ և առաջարկում է այդ ռեսպուբլիկաների կոմունիստական պարտիաների Կենտրոնական Կոմիտեներին կենսագործել այդ որոշումը։ Անդրկովկասի բոլշևիկները ընկերներ Ս. Օրջոնիկիձեի և Ս. Կիրովի գլխավորությամբ լայն բացատրական աշխատանք են տանում մասսաների մեջ, որոնք մեծ խանդավառությամբ են ընդունում այդ անհրաժեշտ քայլը, որովհետև նա համապատասխանում էր նրանց կենսական շահերին, ջախջախում են նացիոնալ-ուկլոնիստների, դաշնակցականների, մենշևիկների, ժուսավաթականների և այլ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների թափթփուկների դիմադրությունը Ֆեդերացիայի կազմակերպման գործում և ստեղծում են Անդրկովկասյան Ֆեդերացիան։

Հայաստանի Սովետների առաջին համագումարը խանդավառությամբ

[1] Г. К. Орджоникидзе—Избранные статьи и речи ... стр 70.
[2] Նույն տեղում, էջ 90

և միաձայն հավանություն տվեց Ֆեդերացիայի կազմակերպման առաջարկին, այդ առթիվ ընդունված բանաձևում ասվում էր.

«Երեք խորհրդային հանրապետությունների, ուրեմն նաև Հայաստանի ինքնապաշտպանությունը իմպերիալիստական, հակահեղափոխական արշավանքներից հրամայորեն թելադրում է եղբայրական երեք հանրապետությունների ֆեդերացիան։ Ֆեդերացիան ամուր կերպով կշաղկապի երեք հանրապետությունները ու նրանց դինական և դիմադրական կարողությունը կդարձնի զորավոր։ Ֆեդերատիվ կապով միանալու անհրաժեշտությունը թելադրվում է այլև Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի ներքին հակահեղափոխության դեմ կռվելու պահանջից։ Գարտված դաշնակցականները, մուսավաթականները և մենշևիկները փայփայվելով իմպերիալիստական պետությունների կողմից՝ ծրագիր ունեն միասին հարձակվելու երեք հանրապետությունների բանվորա գյուղացիական իշխանության վրա։ Այդ ուժ դավերը ընում խեղդելու համար անհրաժեշտ է նրանց հակադրել երեք խորհրդային հանրապետությունների միացած երկաթե շարքերը։ Հանրապետությունների տնտեսական վերաշինության խնդիրները նույնպես հարկադրական անհրաժեշտություն են դարձնում ֆեդերացիան՝ իբրև տնտեսական, շինարարական գործակցության հզոր միջոց։ Եղբայրական հանրապետությունների ժողովրդատնտեսության տյժմյան ընկած վիճակը մեծ չափով հետևանք է նախկին կառավարությունների օրոք եղած եղբայրասպան կռիվների և ավերումների—տնտեսական այդ մեծ վեր քը պիտի բուժել նույն այդ հանրապետությունների շինարար ուժերի միացման կապերով, որով մենք կվերականգնենք, կյանքի կկոչենք մեր երկրի արտադրական կարողությունները։

Հայաստանի Բանվորների, Գյուղացիների և Կարմիր-Զինվորների առաջին համագումարը խանդավառությամբ է ընդունում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի Խորհրդային հանրապետությունների ֆեդերացիայի հասունացած դաղափարը և հանձնարարում է Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեին գործնական բոլոր միջոցները շտապորեն կատարել ֆեդերացիան շուտով իրականացնելու համար։[1]

Համագումարը լսեց կառավարության զեկուցումը նոր տնտեսական քաղաքականության կիրառման առաջին արդյունքների և հետագա հեռանկարների մասին։ Հայաստանում նոր տնտեսական քաղաքականությունն սկսեց կիրառվել քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո։ Նոր տնտեսական քաղաքականության կիրառման կապակցությամբ անհրաժեշտ էր անցնել տնտեսական հաշվարկման, պետական ելքը պիտի կազմվեր ըստ մուտքի, իսկ մինչև այդ պետական բյուջեն եղել էր ավելի շատ ծախսերի, քան թե եկամուտի բյուջե։ Համագումարին կառավարությունը ծանոթացրեց 1923 թ. բյուջեի հետ, նրա մուտքի և ելքի առանձին հոդվածների հետ։ Համագումարը հավանություն տվեց կառավարության ձեռնարկումներին և 1922 թ. տնտեսական աշխատանքների ծրագրին։ Միաձայն ընդունված բանաձևում ասվում էր.

---

1 Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Բանվորների, Գյուղացիների և Կարմիր-բանակայինների Պատգամավորական Խորհուրդների առաջին համագումարի արձանագրություն ....էջ 130։

«Հայաստանի Խորհուրդների առաջին համագումարը լսելով կառավարության զեկուցումը տնտեսական նոր քաղաքականության մասին, հաստատեց, որ այդ քաղաքականությունն ուղիղ է, և իր հավանությունը տվեց այդ քաղաքականությունը կիրառելու համար խորհրդային իշխանության կողմից ձեռք առնված միջոցներին»[1]

Գյուղատնտեսության վերականգնումը Սովետական Հայաստանի կառավարության առաջնահերթ խնդիրն էր, որի լուծումը կհարվածեր սովին, առանց որի հնարավոր չէր մի որևէ նորմալ աշխատանք կատարել երկրում, և հնարավորություն կտար վերականգնելու Հայաստանի արդյունաբերության այնպիսի ճյուղերը. ինչպիսիներն էին սպիրտի արդյունաբերությունը, կաշեգործությունը, կոնսերվինը և այլն։ Համագումարը չէր կարող չզբաղվել այդ կարևորագույն հարցով և նա քննարկեց Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի զեկուցումը։ Զեկուցման շուրջը բացված մբաքերի փոխանակությանը մասնակցող պատգամավորները սուր կերպով էին դնում հողաշինարարության խնդիրը։ Հայաստանի Ռևկոմը 1920 թ. դեկտեմբերի 18-ին հրապարակած իր դեկրետով ազգայնացրեց հողը։ Դեկրետի առաջին կետում ասվում էր.

«Բանվորա-գյուղացիական ազգաբնակության հողազուրկ և սակավահող մասը հողաբաժիններով ապահովելու և գյուղատնտեսությամբ զբաղվել ցանկացողներին հողեր բաշխելու նպատակով, այլև հանրապետության. բոլոր կարիքները բավարարելու համար, արքունական, նադելի, եկեղեցապատկան, վանքային, վակուֆային, մեչիտային, իրավաբանական անձերի և մասնավոր հողերը դառնում են Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սեփականությունն»։

Հողը ազգայնացնելուց հետո անհրաժեշտ էր այն բաշխել հողազուրկ և սակավահող գյուղացիությանը և մեծ թվով գաղթականությանը, վերջինիս կապելով հողի հետ, և այդպիսով ազատել նրան սպասողական դրությունից։ Համագումարը որոշեց հողը բաշխել ըստ շնչերի։ Իսկ նորմաները որոշվելու էին ըստ տեղերի հողային ֆոնդի։ Որպեսզի գյուղացին լավացնի իր հողաբաժինը՝ համագումարը որոշեց հողը հատկացնել 9 տարով, որից հետո միայն կատարել նոր հողաբաժանում։ Հնարավորության սահմաններում վերջ պիտի տրվեր հողհեռավորությանը և հողցրվածությանը, առանձնացվելու և պահվելու էր հատուկ հողային ֆոնդ հայրենիք վերադարձող գաղթականության համար։ Այդիները ենթակա չէին բաշխման, բացի նրանցից, որոնց տերերը կամ գտնվում էին երկրից դուրս, կամ թե կապ չունեին այգեգործության հետ։

Ծանր և լուրջ խնդիր էր հողաշինարարությունը։ Նա էր, որ պիտի վերջ դներ հողային մեծ անհավասարությանը, որը գոյություն ուներ գյուղում դեռ ցարիզմի ժամանակից և ուժեղացել էր դաշնակցականների օրոք։ Անհավասարություն գոյություն ուներ նաև առանձին գյուղերի միջև։ Միջգյուղյա հողաշինարարական աշխատանքներն սկսվեցին 1922 թ. գարնանից և սկզբում դանդաղ էին ընթանում մասնագետ—հողաչափների թվի սահման-

[1] Տես արդեն ցույց արված՝ Հայաստանի Սովետների առաջին համագումարի արձանագրությունը, էջ 126։

[2] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, էջմիածին, 1921 թ., էջ 31

նափակ լինելու պատճառով։ Այդ նույն պատճառով գյուղի ներքին հողաշինարարությունը, որ նույնպես սկսվեց 1922 թ. գարնանից և խոշոր նշանակություն ուներ հողը գյուղի ունևոր խավի ձեռքից խլելու տեսակետից և չէր կարելի հետաձգել հողաչափեր չլինելու պատճառով, կատարվում էր հիմնականում գյուղացիների կողմից ընտրված փորձված չափրարների միջոցով, որոնց աշխատանքն ընթանում էր գյուղական հողկոմների ղեկավարության և հսկողության ներքո։ Նորմայից ավելի ունեցողներից հողերը ներքին հողաշինարարության ընթացքում վերցվում էին և բաժանվում հողաղուրկ ու սակավահող գյուղացիների միջև։ Այդ աշխատանքը հաճախ հանդիպում էր կուլակ տարրի դիմադրության, որը ճնշվում էր։

Տնտեսական-քաղաքական խոշոր նշանակություն ուներ 1922 թ. գարնանացանը, որի խնդրով և զբաղվեց համագումարը։ Հողժողկոմատի զեկուցման առթիվ ընդունված բանաձևում այդ մասին ասվում էր.

«Իրրև հիմնական և անհետաձգելի խնդիր, մեր երկրի տնտեսական վերաստեղծման ասպարեզում ծառացած է առաջիկա գարնանացանի լայն և պլանաչափ կազմակերպման գործը, որի ընթացքում անհրաժեշտ է կյանքի կոչել երկրի բոլոր գործոն ուժերը»։[1]

Համագումարը առաջարկեց Հողժողկոմատին՝ հատուկ ուշադրություն դարձնել գյուղատնտեսության բարձր կուլտուրաների—այգեգործության, բամբակագործության, ծխախոտագործության վերականգնմանը և զարգացմանը, ցույց տալով կոնկրետ միջոցառումներ այդ խնդիրը իրագործելու համար, ուշադրություն դարձրեց ջրաբաշխական գործին՝ առաջարկելով Հողժողկոմատին վերանորոգել հին առուները և սկսել նոր ջրանցքների կառուցումը՝ առաջին հերթին Էջմիածնի ու Շիրակի ջրանցքների կառուցումը։ Այնուհետև համագումարը Հողժողկոմատին առաջարկում է բարձրացնել անասնապահությունը, առանձին ուշադրություն դարձնել անտառների պահպանման և անտառաբուծության վրա, հրավիրելով ազգաբնակությանը խնամքով մոտենալ անտառից օգտվելու գործին, պաշտպանել նրան, նպաստել շերամապահության և մեղվաբուծության զարգացմանը, ծանոթացնել գյուղացիությանը գյուղատնտեսության բարձր ձևերի հետ մասնագիտական դպրոցների, փորձադաշտերի, գյուղատնտեսական դասընթացների և լավ կազմակերպված ֆերմաների միջոցով։ Համագումարը հողի անհատական օգտագործման ձևի մասին ասում էր, որ օգտագործման այդ ձևը պիտի դիտել որպես ժամանակավոր և անցողական երևույթ, որը բխում է գյուղատնտեսության զարգացման ներկայիս պահանջներից, և աստիճանաբար անցնել հողօգտագործման ավելի բարձր ձևի, ինչպիսին են, օրինակ, գյուղատնտեսական արտելները, որոնք բարձրացնելով գյուղատնտեսությունը, նրա արտադրանքը, դրանով իսկ կբարձրացնեն գյուղացիության բարեկեցությունը։

Գյուղատնտեսության վերականգնումը համարելով առաջնակարգ խնդիր, առանց որի հնարավոր չէր երկրի ընդհանուր տնտեսական վերականգնումը, համագումարը Սովետական Հայաստանի կառավարությանը հանձնարարեց լարել երկրի բոլոր ուժերը այդ խնդիրը լուծելու համար։

---

[1] Տես Հայաստանի Սովետների առաջին համագումարի արդեն ցույց տրված արձանագրությունը, էջ 199։

«Մեր երկրի տնտեսության վերաշինման գործը,—ասվում էր համագումարի բանաձևում,—գերազանցապես կապելով գյուղատնտեսության զարգացման հետ, համագումարը հրահանգում է կառավարությանը յուր գործունեության հիմնական մոմենտը համարելով գյուղատնտեսության լայն կազմակերպումը՝ հրապարակ հանել այդ գործի կազմակերպչական և նյութական ուժերի մաքսիմումը»։[1]

Համագումարը լսեց Պարենավորման Ժողովրդական Կոմիսարիատի զեկուցումը։ Հայաստանում Սովետական իշխանությունը հաստատվելուց հետո այդ Կոմիսարիատի վրա էր գրված բանվորների, սովետական ծառայողների, Կարմիր Բանակի, մանկատների, հիվանդանոցների, ուղղիչ տների պարենով մատակարարման խնդիրը։ Վերին աստիճանի դժվարին գործ էր դա։ Սի որևէ շոշափելի քանակությամբ պարեն հավաքել երկրի ներսում հնարավոր չէր, որովհետև գրեթե ոչինչ չէր մնացել։ Ինչպես արդեն ասինք, օգնության հասավ Սովետական Ռուսաստանը, որը տվեց վայլյուտա, պարենամթերք և մանուֆակտուրա։ Դաշնակների փետրվարյան ավանտյուրան ջախջախվելուց հետո Պարժողկոմատը հնարավորություն ունեցավ ավելի շատ ուշադրություն դարձնել արտաքին հայթայթումների վրա։ Պարսկաստանից, Պոլսից Հայաստան ներմուծվեցին շուրջ 205 հազար փութ ցորեն, ալյուր, գարի։ Պարտիական և սովետական օրգանների եռանդուն աշխատանքի շնորհիվ հաջողվեց բավարար չափով հավաքել 1921 թ. պարենտուրքը, որի գանձումը առաջին անգամն էր կատարվում Հայաստանում։ 1921 թվին Պարժողկոմատը բաց էր թողել մեկ միլիոն 287 հազար 613 ոսկե ռուբլու հաշվով ապրանքներ Հայաստանի բնակչության հետևյալ կատեգորիաներին և կազմակերպություններին՝ բանվորներին, ծառայողներին, մանկատներին, հիվանդանոցներին 604 հազար 839 ռ., Կարմիր Բանակին—601 հազար 025 ռ., երկաթուղու սպառողական կոոպերացիային—68 հազար 499 ռ., Հայկոոպին—13 հազար 499 ռ.։[2] Ինչպես երևում է բերված թվերից՝ Հայաստանի աշխատավորները ամենասուղ բոպեին անգամ չէին մոռանում հոգալ Կարմիր Բանակի կարիքները։ Պարժողկոմատը կազմակերպեց և ապրանքափոխանակությունը գյուղի հետ, ուղարկելով այնտեղ մանուֆակտուրա, օճառ, աղ, նավթ, կոճակ, ասեղ և ուրիշ արդյունաբերական ապրանքներ։ Այդ միջոցով ևս հնարավոր եղավ փոքր քանակությամբ հացահատիկ և միս հավաքել։

Համագումարը հավանություն տվեց Պարժողկոմատի աշխատանքին և որոշեց.

«...Նկատի ունենալով այն հանգամանքը, որ պարենտուրքի գանձումը 1922 թ. կազմելու է մեր հանրապետության խոշոր աղբյուրներից մեկը, համագումարը հրահանգում է Պարժողկոմին հենց այժմյանից դիմել կազմակերպչական աշխատանքի՝ 1922 թ. պարենտուրքը ավելի հաջողությամբ գանձելու համար»։[3]

Նոր տնտեսական քաղաքականության կիրառման պայմաններում առաջնակարգ նշանակություն է ստանում առևտուրը, ապրանքաշրջանառությունը քաղաքի և գյուղի միջև։

---

1 Նույն տեղում, էջ 124։
2 Նույն տեղում, էջ 61։
3 Նույն տեղում, էջ 110։

«Այդ ժամանակաշրջանում (այսինքն՝ Նէպի ժամանակաշրջանում. Հ. Է.),— կարդում ենք մենք Համ. Կոմ. (բոլշ.) պարտիայի պատմության համառոտ դասընթացում,—առևտուրը հիմնական օղակն էր պարտիայի առջև կանգնած խնդիրների շղթայի մեջ։ Առանց այդ խնդիրը լուծելու չէր կարելի ապրանքաշրջանառություն ծավալել քաղաքի և գյուղի միջև, չէր կարելի ամրացնել բանվորների և գյուղացիների տնտեսական դաշինքը։ չէր կարելի գյուղատնտեսությունը բարձրացնել, արդյունաբերությունը քայքայումից դուրս բերել։» Այս թե ինչու Հայաստանի Սովետների առաջին համագումարը լսեց և Հայկոոպի զեկուցումը։

Սպառողական կոոպերացիան Սովետական Հայաստանում առաջին շրջանում կազմակերպորեն Գարժողկոմատի մի բաժինն էր կազմում, որի ֆունկցիան էր՝ բաշխումն ու մատակարարումը։ Այդ շրջանում կոոպերացիան ինքնուրույնություն էր վայելում միայն որոշ չափով։ Որոշ ժամանակից հետո, համաձայն կառավարության որոշումների, կոոպերացիան դառնում է ինքնուրույն, անկախ կազմակերպություն։ Նա ստանում է նյութական միջոցներ, ինչպես և մի շարք արտոնություններ մասնավոր առևտրի դեմ պայքարելու համար։ Արտաքին առևտրի իրավունքները նույնպես տրված էին նրան։ Կոոպերացիան ուներ նաև արտադրական ֆունկցիաներ։ Նա Հայաստանի զանազան մասերում կազմակերպել էր փոքր արտադրական ձեռնարկություններ և արտելներ, ինչպես օրինակ՝ օճառի գործարաններ Երևանում և Ալեքսանդրոպոլում, ծխախոտի գործարան Երևանում, մեքենագործական արհեստանոցներ Երևանում, մուճակի արհեստանոց և այլն։

Արձանագրելով կոոպերացիայի առաջին հաջողությունները, համագումարը կառավարությանը հանձնարարում է ավելի լայն աջակցություն ցույց տալ կոոպերացիային, նկատի ունենալով, որ։

«... Կոոպերացիան հանդիսանում է ոչ միայն ազգակը՝ նահապետական գյուղի արտադրական ուժերի բարձրացման..., այլև բանվորի և գյուղացու իշխանության պայմաններում խոշորագույն գործոններից մեկը՝ անհատային հոգեբանությամբ տոգորված մանր ու մեկուսացած արտադրողին ապագա սոցիալիստական տնտեսության գիրկը սգելու և նրա մեջ կոլեկտիվ ոգի ու հատկություններ մշակելու գործում»[2] և որ «...լավ կազմակերպված կոոպերացիան հանդիսանում է գյուղի և քաղաքի ապրանքափոխանակության գործի կազմակերպման ամենահզոր միջոցը սոցիալիստական պետության մեջ, որը նպատակ ունի վերացնել մասնավոր կապիտալի կիրառումը ապրանքափոխանակության ասպարիզում, ուստի և հանդիսանում է սոցիալիստական հասարակակարգի հաղթանակի հզոր խթաններից մեկը»։[3]

Կոոպերացիայում, Հողժողկոմատում, Գարժողկոմատում և մի շարք ուրիշ հիմնարկներում «մասնագետների» կամ «փորձված» աշխատավորների անվան տակ տեղ էին գտել դաշնակցական-ազգայնական տարրերը, որոնք քիչ չվնասեցին սովետական այդ օրգանների աշխատանքներին։ Հետագայում նրանք մերկացվեցին որպես ժողովրդի թշնամիներ։

[1] Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Գարտիայի պատմություն, Համառոտ դասընթաց։ Երևան, 1946 թ., էջ 356—357։

[2] Տես Հայաստանի Սովետների առաջին համագումարի արդեն ցույց տրված արձանագրությունը, էջ 181։

[3] Նույն տեղում։

Սովետական իշխանությունը Հայաստանում տնտեսապես քոլորովին քայքայված երկրի հետ միասին որպես ժառանգություն ստացավ որբերի և գաղթականների բազմահազար բակմություն։ Ինչպես հայտարարեց համագումարում իր զեկուցման մեջ Ա. Մյասնիկյանը, որբերի թիվը հասնում էր մոտ 50 հազարի, իսկ գաղթականությանը 200 հազարից ավելի էր։[1] Ռուսին համաշխարհային պատերազմի և զաշնակցական կառավարության հանցավոր քաղաքականության այդ զոհերի վիճակը չէր կարող չհետաքրքրել Հայաստանի աշխատավորներին, և համագումարը լսեց զեկուցում սոցիալական ապահովության գործի դրության մասին։

Գաղթականության մի մասը ժամանակի ընթացքում արդեն կապվել էր հողի հետ, իսկ մյուս մասին կապից Սովետական իշխանությունը՝ հող տալով նրան։ Պետական լուրջ խնդիր էր որբերի պահպանումը և դաստիարակումը։ Երկրի տնտեսական սուղ վիճակը թույլ չէր տալիս Սովետական կառավարությանը՝ որբերի պահպանման և գաղթականության օժանդակման գործը ամբողջովին իրեն վրա վերցնելու, և նա ստիպված էր ժամանակավորապես համաձայնվել ամերիկյան օգնության հետ այդ գործում, որը սկսվել էր դեռ մինչև Սովետական իշխանության հաստատումը։ Անհրաժեշտ էր այդ որբերին դաստիարակել կոմունիստական ոգով, նրանցից պատրաստել սոցիալիստական շինարարության համար պիտանի աշխատողներ։ Համագումարի ընդունած որոշումը այդ մասին ասում էր.

«Հաշվարկելով որբերի հարցը ոչ միայն սոցիալական ապահովության, այլև մեծապես սոցիալական կրթության և դաստիարակության հարց՝ առաջարկվում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեին արագացնել մանկատների հանձնումը Լուսժողկոմին»։[2]

Քիչ հետո, երբ բարելավվեց երկրի տնտեսական դրությունը, մանուկների պահպանման և դաստիարակման գործը իր ձեռքը վերցրեց կառավարությունը։ Այնուհետև համագումարը հրահանգեց տեղական իշխանություններին՝ առանձին ուշադրություն դարձնել սոցիալական ապահովության աշխատանքների վրա, կազմակերպել տեղերում ինքնօգնության գործը, հատուկ հոգացողության առարկա դարձնել կարմիր-բանակայինների ընտանիքներին օգնելու գործը։

Անդրկովկասյան կոնտրոլուցիոն ջախջախված պարտիաների՝ դաշնակների, մենշևիկների, մուսավաթականների ղեկավարները փախչելով Անդրկովկասից արտաքսման՝ դավեր էին լարում անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների դեմ։ Եվրոպական մի քանի իմպերիալիստական պետություններ, ինչպես, օրինակ, Ֆրանսիան և Անգլիան, ի նկատի ունենալով Անդրկովկասի տնտեսական նշանակությունը և նրա աշխարհագրական դիրքը՝ ձգտում էին օգտագործել այդ կոնտրոլուցիոն ուժերն իրենց հակասովետական պլանների իրագործման համար։ Հիշված պարտիաների ներկայացուցիչները 1921 թ. հունիսին Փարիզում մի համաձայնագիր էին կնքել այն մասին, որ իրենց մեջ եղած վեճերը «վերջացած» են համարում և միանում են իրար հետ, նպատակ ունենալով տապալել Սովետական իշխանությունը Անդրկովկասում։ Համաձայնագիրը կնքված էր Ֆրանսիական

[1] Նույն տեղում, էջ 19։
[2] Նույն տեղում, էջ 130։

կառավարության գիտությամբ։ Սովետական Ռուսաստանի վրա մի ոբեկ կապիտալիստական պետության հարձակման դեպքում անդրկովկասյան կոնտրոնևոլուցիոն ուժերը մասնակցելու էին այդ արշավանքին։ Ելնելով այս բոլորից՝ համագումարը լսեց զեկուցում Կարմիր Բանակի գրության և մարտունակության մասին։

Հայաստանում Սովետական իշխանություն հաստատվելուց անմիջապես հետո հատուկ ուշադրություն է դարձվում Կարմիր Բանակի կազմակերպման գործին։ 1921թ. դեկտեմբերի 5 ին սկսվում է Ռազմական ժողովրդական Կոմիսարիատի կազմակերպման աշխատանքը։ Բանակում մտցվում է կոմիսարների ինստիտուտը, նրա շարքերից արտաքսվում է հակառևոլուցիոն սպայությունը, զորացրվում են բարձր հասակավոր զինապարտները։ Հայկական Կարմիր Բանակի կորիզը կազմեցին Ղազախ—Դիլիջան շրջանի մայիսյան ապստամբության մասնակիցները, որոնք ապստամբությունից հետո ստիպված եղան ժամանակավորապես նահանջել Սովետական Ադրբեջան։ Բանակը դեռ իր կազմակերպական շրջանն էր ապրում, երբ սկսվեց դաշնակցականների փետրվարյան կոնտրոնևոլուցիոն ելույթը։ Քառասունհինգ օր տևող մարտերում Հայկական Կարմիր Բանակը ցույց տվեց իր անսահման սերը դեպի Սովետական իշխանությունը, տոկունությունը և ռազմունակությունը։ Այժմ, քաղաքացիական կռիվը վերջանալուց հետո, անհրաժեշտ էր ուժեղացնել քաղաքական-դաստիարակչական աշխատանքը, ստեղծել կանոնավոր, իր դիսցիպլինայով ուժեղ և էլ ավելի մարտունակ բանակ։ Այդ զեկուցման առթիվ համագումարի ընդունած որոշումում ասվում էր.

«Հայաստանի Կարմիր Բանակը քաղաքացիական կռվի դաշտում ցույց տալով իր հեղափոխական անձնվիրությունը բանվորաղյուղացիական մասսաների հանդեպ, այժմ անցել է իր շարքերի վերակազմության և ամրացման։ Այս գործում տեղական խորհուրդները շատ մեծ դեր ունեն կատարելու։ Նրանք պետք է ամեն տեսակ նյութական և բարոյական աջակցություն ցույց տան մեր զորամասերին և բոլոր հնարավոր միջոցներով աշխատեն բարձրացնել Կարմիր Բանակի բարեկեցությունը, նրա մտավոր ու բարոյական դաստիարակությունը...

Խորհրդային իշխանության կարմիր դրոշի պաշտպանությունը Կարմիր Բանակին հանձնելով՝ համագումարը հանձնարարում է Կենտգործկոմին և տեղական բոլոր խորհրդային օրգաններին ամենամեծ ջանքերը թափել Կարմիր Բանակի կուլտուր-կրթական և քաղաքական լուսավորության աշխատանքների համար, որով մենք Կարմիր Բանակի ուժն ու գիտակցությունը էլ ավելի կբարձրացնենք և նրան կդարձնենք անսասան ու անհաղթ պաշտպանը կարմիր դրոշակի, որ կազմ-պատրաստ կլինի ջախջախելու հակահեղափոխությունը երկրի ներսում և պաշտպանելու երկիրը դրսի հարձակումներից»[1]

Համագումարը վերջին նիստում, փետրվարի 4-ին, ընտրում է Կենտրոնական Գործադիր Կոմիտե և դրանով վերջացնում իր աշխատանքները։

Համագումարը անձամբ ողջունեց հայ ժողովրդի լավագույն բարեկամներից մեկը՝ Ս. Օրջոնիկիձեն, որին համագումարը ընդունեց մեծ խանդավառությամբ։ Իր ողջույնի խոսքում ընկեր Ս. Օրջոնիկիձեն ասաց.

[1] Նույն տեղում, էջ 128—129։

«Ընկերներ, երկրորդ անգամն է, ինչ ինձ վիճակվում է լինել այս դահլիճում։ Առաջինն այն ժամանակ, երբ Խորհրդային իշխանությունը եկել էր ազատելու այս երկրի աշխատավորությանը, ինձ հաջողվեց հանդիպել հայ աշխատավորությանը, որը լցված էր անզուսպ էնտուզիազմով։ Դավաճան դաշնակներին վերջնական հարված տալուց հետո ձեր երկրի խորհուրդների այս առաջին համագումարին վրաց աշխատավորության կողմից տալիս եմ խոնարհ ողջույններ և եղբայրական բարևներ... Խորհրդային իշխանությունը եկավ ու ապացուցեց, որ իրոք, նա Հայաստանի աշխատավորությանը գիշատիչներից ազատելու համար է եկել։ Ադրբեջանում մենք որոշեցինք օգնական ուժ տալ հայ աշխատավորությանը, և նա մի կամք դարձած և միայն մի գնդի օժանդակությամբ ազատագրեց իրեն։ Արտաքին բոլոր ուժերը, բացի Ռուսաստանից, Հայաստանը ի նկատի ունեին որպես շահագործության մի առարկա, իսկ Ռուսաստանի վերաբերմունքը արդեն պարզ էր։[1]

Իր ողջույնը Ս. Օրջոնիկիձեն վերջացնում է կոչելով Հայաստանի աշխատավորներին շինարար աշխատանքի։

«Ես ձեզ կոչ եմ անում, ընկերներ,—ասաց ընկեր Օրջոնիկիձեն,—նորոգել քանդված Հայաստանը, վերականգնել նրա տնտեսությունը, օգնել Կարմիր Բանակին...[2]

Համագումարը հանձին Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահ ընկեր Կալինինի, իր շնորհակալական խոսքը ուղղեց ռուս մեծ ժողովրդին։ Դիմումում ասվում էր.

«Հայաստանի Խորհուրդների համագումարը առաջինն է, որ իրականացնում է երկրի իշխանությունը ամբողջ աշխատավորությանը հանձնելու փառավոր ժամը և հիացմունքով ու սիրով լի իր հայացքը, իր հոգու անկեղծ խոսքն է ուղղում բանվորա-գյուղացիական Ռուսաստանին։ Համագումարը գիտակցում է այն օգնությունը, որ Խորհրդային Ռուսաստանը ցույց է տվել մեր երկիրը Արևմտյան Եվրոպայի իմպերիալիստների ու նրանց ծառա դաշնակների լծից ազատելու գործում։ Համագումարը իր շնորհակալությունն է ուղղում Ռուսաստանի փառավոր Կարմիր Բանակին, որ Հայաստանի մասսաներին աջակցեց Խորհրդային իշխանության կարմիր դրոշակը բարձրացնելու համար։

Իր ջերմ ողջույնն ուղղելով Ռուսաստանի Բանվորա-Գյուղացիական և Կարմիր Զինվորների Պատգամավորական Խորհուրդների Կենտրոնական Գործադիր Կոմիտեին՝ Հայաստանի Խորհուրդների համագումարը Համառուսական Կ. Գ. Կոմիտեին հայտնում է Հայաստանի աշխատավորության կամքը—մենք մեր հաղթական դրոշակը բարձր կպահենք, և ոչ մի ուժ այդ դրոշակը մեր ձեռքից խլել չի կարող»։[3]

Համագումարը դիմեց Հայաստանի աշխատավորներին՝ կոչ անելով նրանց՝ եռուն աշխատանք ծավալել երկիրը վերաշինելու համար և արթուն հսկել, որ թշնամին չխանգարի երկրի անդորրությունը։

«Հայաստանի աշխատավոր մասսաները,—ասվում էր կոչում,—հայ,

[1] Նույն տեղում, էջ 115։
[2] Նույն տեղում, էջ 116։
[3] Նույն տեղում, էջ 148—149։

թուրք, եզիդի, ռուս վերջապես իրականացած են տեսնում իրենց դարավոր իղձը՝ իրենց կյանքի, իրենց հալալ աշխատանքի տերն են դառնում։ Ցուրաքանչյուր գյուղացի, բանվոր ու զինվոր այսուհետև պիտի խորապես գիտակցի, որ այլևս ինքն է Հայաստան երկրի միակ տերը, իր բախտի միակ տնօրենը։

Այս պատմական և հանդիսավոր ժամին Հայաստանի աշխատավորը զգվանքով ու զայրույթով է մտաբերում իր մոտավոր անցյալի մռայլ էջերը և նրանց տխրահոչակ հեղինակներին։ Նրանց թողած ավերակները, բազմաթիվ գաղթականները ու որբերը, սրի ու հրի մատնված շեներն ու ավանները նողկանքի ու նախատինքի մի սևավոր արձան են նախկին ապիկար կառավարության, որը Հայաստանի ժողովուրդների համար այնքան թանգ գնով ցանկացավ եվրոպական հողատերերի ու փողատերերի, իմպերիալիստական գայլ ու գազանների հնազանդ կամակատարը հանդիսանալ։

Այս պատմական և հանդիսավոր ժամին Հայաստանի աշխատավորը հիացմունքով ու հրճվանքով է դարձնում իր աչքը դեպի հեղափոխական Ռուսաստանը, որը ծառս ելնելով իմպերիալիստական աշխարհի դեմ՝ խորտակեց նրանց շղթաները և իր կենսարար, պայծառ ու ազատարար ճառագայթները տարածեց մինչև Հայաստան։

...Մենք վառել ենք մեր օջախը փլատակների մեջ ու վարում, ցանում ենք մեր ամայի դարձած արտերը, մենք կշենացնենք մեր երկիրը վերըստին, ինչպես բազմիցս շենացրել ենք թշնամի ուժերի սրածությունների ու ավերածություններից հետո։ Դրա համար է փողփողում մեր երկրում Խորհրդային իշխանության կարմիր դրոշակը, խաղաղության և աշխատանքի մեր նվիրական դրոշակը։ Եվ թող հայ աշխատավոր մասսաների հանգիստը վրդովել կամեցողները լավ իմանան՝ այսօր հայ ժողովուրդը այլևս առաջվա պես մենակ չի, նրա կողքին կանգնած են եղբայրական Ադրբեջանը ու Վրաստանը, նրա թիկունքին՝ հզորազոր Ռուսաստանը։

Հայաստանի աշխատավոր ժողովուրդների անդրանիկ համագումարը հայտարարում է իր անհողդողդ կամքը՝ վերականգնել երկրի տնտեսությունը, ստեղծել բանվորա-գյուղացիական բարեկեցիկ կյանք։

Ով էլ լինի, որտեղից էլ լինի սպառնացողը այդ կենսարար շինարարության՝ նկատվելու է որպես թշնամի հեղափոխության ու աշխատավոր մասսաների»։[1]

Համագումարը ողջույնի խոսքով դիմեց և հայկական գաղութների աշխատավորներին։ Դիմումում խոսվում էր Սովետական Հայաստանի միջազգային և ներքին դրության և այն մեծ շինարարական աշխատանքի մասին, որին եռանդով կպել էին Հայաստանի աշխատավորները, և համոզմունք էր հայտնվում, որ հայկական գաղութների աշխատավորները կշարունակեն պայքարել հայ աշխատավորների ոխերիմ թշնամիների՝ դաշնակցականների դեմ։

«Հայաստանի խորհուրդների առաջին համագումարը,—ասվում էր դիմումում,—լիահույս է, որ երկրի վերաշինության և նրա ապագայի դարմանման գործում նրա հետ է նաև գաղութների հայ աշխատավորությունը։

[1] Նույն տեղում, էջ 167—169։

կարված բուն երկրից, գաղութների աշխատավորությունը ոչինչ չպիտի խնայի իր օգնությունը հասցնելու երկրի աշխատավորությանը, որի քայքայված տնտեսությունը վերականգնելը և երկրում ծվարած գաղթականության փրկության գործը պետք է զբաղեցնի գաղութաբնակ ամեն մի հայ աշխատավորի»[1]

Սովետների անդրանիկ համագումարը նախ և առաջ կոնստիտուցիոնալ համագումար էր և նա որպես այդպիսին կմտնի Սովետական Հայաստանի պատմության մեջ։ Միաժամանակ նա իր խոսքն ասաց Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծման մասին և սովետական ղեկավար օրգանների համար նշեց այն ուղիները, որոնցով նրանք պիտի ընթանային ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի մեկ տարվա—1922 թվի ընթացքում՝ մինչև Սովետների երկրորդ համագումարը, որը տեղի ունեցավ նույն թվի նոյեմբերի 30-ին։

[1] Նույն տեղում, էջ 186